

ներն, ըստ որում հաշուուած են անբ թագաւորաց նոցա, Հայոց տարնմուռէն տարրեր էին. և թէ Պերոզի թագաւորութեան ամբողջ տարիներն ոմանք 27 կը հաշուեն և ոմանք 24, իսկ այլք՝ ընդ Սա. մուշէի 22, իսկ միւս կողմէն դիտել արժան է, թէ, ըստ Ստեփ. Ա. սողկայ, Բովսեփայ նահատակութիւնն յամին 454, (Յուլիս 25, 'ի կիւրակէի) հանդիպեցաւ. գուցէ այս ժամանակէն սկսեալ պաշտօ. նապէս հաշուած են Գոսայ կաթողիկոսութեան տարիներն, որուն հետ սերտիւ միացած էին և Մանդակունուոյն:

Այժմ տեսնենք համառօտիւ նորա ծննդեան տարեթիւն, Չամչեա. նի հետ ուրիշներ ևս կ'աւանդեն, թէ սուրբ հայրապետս 75 ամեայ հասակի մէջ էր, երբ առաջին անգամ բարձրացաւ Ս. Լուսաւորչայ աթոռին վերայ: Չկարեմ հաւատեաւ ասել, թէ ինչ հիման վրայ հաստատուած է այս ենթագրութիւնս, զի նորա ծննդութիւնը մի. այն յայտնի է մեզ, աս Ղազարայ. իսկ արդ եթէ ստոյգ է, թէ նա յամին 471 արդէն կը կրէր իւր ուսոց վերայ 75 կ'որ տարիներ, պէտք է եզրակացնել, թէ 396ին ծնած լինելու էր. իսկ նորա 75 տարինե. ըուն վրայ յաւելցնելով նաև այն 42 տարիներն, յորս քաջութեա վարեց նա զկաթողիկոսութիւնը, կ'ունենանք մերձաւորապէս մե. ծանուն կաթողիկոսիս կեանքն և բազմապիսի գործերն արդիւնաւ. ըող 87 տարիներն:

Շարունակելի

Հ. Բ. ՍԱՐԳՍԵԱՆ

## ԱՅՐԻ ՎԱՆԻՑ

### ՀԱՍՏԱՏՈՒԹԻՒՆԸ ԵՒ ԿՈՐԾԱՆՈՒՄԸ

Ոչ պատմիչք և ոչ այլ արձանագրութիւնք մեզ չեն յայտներ ըս. տուգիւ, թէ երբ հիմնուեր է այս մենաստանս. միայն թէ կը հա. ւատեն՝ որ Զաքարեանց և Պառչեանց եթը եկեղեցիները շինելէն առաջ, որ է նախ քան զժ.Գ դար, կային անդ կրօնաւորք և Ս. Աւ. տոռաճաճիմ եկեղեցին՝ յորում կը կարդանք հնագոյն թուական մի 1177, և քան զայն աւելի հնագոյն խաչքանդակներուն վրայ 1165, Արդեօք ո՞վ նախ այս ալիափայ տեղերուս մէջ ընակութիւն հաստա. տեց, ո՞վ նախ այս լլրծուն ապառաժներուն մէջ շինեց Աստուծոյ տաճարները, ուր հազիւ որսորդները սողոսկելով կարող էին մտնել. ո՞վ արդեօք քրիստոնէական փառաբանութեան արձագանգներով ընդ. հատեց ծածուկ անձաններուն մշտնջենաւոր լուութիւնը, Պէտք է հա. ւատալ աւանդութեան և վարդանայ աշխարհագրին խօսքերուն, թէ

Լուսաւորիչ հաստատներ է ստատ Աստուծոյ տաճարը. և սա՛ կամ հն. թանոսական պաշտամանց տեղ մի էր, և ինքն փոխեց ճշմարիտ Աստուծոյ տաճար, և կամ որ աւելի հաւանական է, երբ ինքն Ս. Հոսիփ սիմեանց ցրուած բնկերները կը փնտռէր, և տեղոյս մօտերը գտնելով անոնց հետքերը (Աղչոց վանքի մէջ), յորում թերևս կուսան ներէն կամ անոնց քահանայիցմէ ոմանք բնակած իրին, անոր համար թերևս խաչ մի տնկեց անդ՝ իւր և ժամանակին սովորութեան համեմատ և սյուպէս միանձանց բնակարան եղաւ, յորոյ ոմա՛ք կը բնակէին քարանձաւաց ծերպերուն և այլ ձեռագործ շէնքերու մէջ:

Ազգիս քրիստոնէութեան առաջին դարերէն Այրից վանք կը կոչուէր, ինչպէս յայտնի է վարդանայ աշխարհագրի խօսքերէն, Մեր պատմագիրք կ'աւանդեն, թէ երբեմն Մեծն Ներսէս աստ եկեր է. բայց աւելի ստոյգ է նորա որդւոյն Մեծին Սահակայ զալուսար, Յովհաննէս պատմաբան կաթողիկոսի ըսածին համեմատ. և նոյն իսկ այս պատմիչս՝ Յուսիպայ և անոր տեղակալ Նարայ հինահարութեանց ժամանակ (923), աստ ապաստանել էր. և ապա, կ'ըսէ նա, ելնելով Այրից վանքէն և Ս. Սահակայ բնակարանէն, որ Գեղայ լեռան ծոր. ծորներու մի փոքր ձորակի մէջ կը գտնուի, ուղղակի դնացիք վերին վանքը՝ որ անասնոց բնակարան էր: Կը յիշէ, թէ անդ կը գտնուէին ևս բնական և ձեռագործ ամրոցներ մարդիկներու և ստացուածներու ապաստանարաններ. որովհետև քառ մարդիկներ գրգռելով զնւար, կ'ըսէին որ շատ մի կինւոր զրկէ, որպէս զինախ Ամրոցին վանքը առնեն, որովհետև անդ կը գտնուին շատ գանձեր, կարասիք և շքեղ եկեղեցիներու շատ մի զարդեր. և նա իսկոյն հեծեալներու ամրոցս մի և զինուած լեգէոններ կը զրկէ Այրին մէջի կուսակրօնից վանքը՝ որ Գառնոյ գեղաքաղաքին արևելեան հիւսիսային կողմը կը գտնուէր. և սրբա յանկարծակի մտնելով այրին մէջ բռնեցին կրօնաւորները՝ ձեծելով և չարչրկելով նոցա պահած ինչքերը կը պահանջէին, մինչև անգամ ոմանք քիչ մի վերջ մեռան. և հուղկահար գայլոց նման յափշտակեցին զիրքերը, եկեղեցւոյ զարդերը, կենդանիները և մեղուաց փեթակներն և վանքը անապատ դարձաւ. և այսու ևս չյագնեալով, կրակ տուին այրեցին շքեղ և գեղեցիկ շինուաներն:

Այս խօսքերէս կարող է ընթերցողը գուշակել՝ թէ այն ժամանակ կը գտնուէին անդ զարմանալի և գեղեցիկ շէնքեր. և պէտք էր իւր շուրջը գտնուէին ոչ միայն արօտատեղիք, այլ նաև մարգեր և պարտէզներ մեղուաց խումբերուն կերակուր լինելու համար: Պատմաբանէն զար մի յառաջ նորա անուանակից և վիճակակից՝ Յովհաննէս Ե Ովայեցին, ոմանց քառութեամբ նախատուելով Բագարատ իշխանէն և նզովելով զիշխանը, ք զնաց առանձնացաւ Այրից վանքը Ս. Սահակայ բնակած տեղը, և անդ թաքելով լռիկ մնջիկ միշտ աղօթքի

կը պարապէր », ուսկից որչաժիտ նախարարները իւր աթոռը դարձուցին : Այս տեղս երբ եղաւ բնակարան Ս. Սահակայ, նախնիք չեն յիշատակած . թերևս այն ժամանակ՝ երբ վաթսուն խարազնագզեաս աչակերաններ ժողովելով հոգևորական կրթութեան կը զբաղէր :

Թէպէտ այժմ այն հնագոյն ժամանակաց շինուածները չեն տեսնուիր, և ոչ պատմաբան կաթողիկոսին յիշատակներէն մինչև յԲ դարուն կէսը, բայց տեղւոյն ամուրթիւնը, որմերու և մատուռներու փոքր հետքերը՝ կը հաւատեն թէ հին բնակութիւն է, այն դարուն կէսին յայտնուած և աւելի վերոգրեալ եկեղեցիներու շինութեամբ յԳ դարուն մէջ զարդարուած : Իսկ աւերումն եղած է Լենկիթի մուրի ժամանակ յԲ դարուն վերջերը :

Երուպացի առաջին ուղևորն Գավենտիէ (փուսնկ) գրեթէ 1655 թուականին եկաւ այս կողմերս, և կը յիշէ ոչ միայն վանքն և եկեղեցին հանդերձ իւր սուրբ սիւներովն, և Գեղարդ և Կէօր—կէլ աւանդն, այլ նաև սուրբ տիգրին պատկերը՝ զոր անդ գծագրեց, ինչպէս մէկուկէս դարէ վերջ՝ Մորիէ անգղիացին յէջմիածին . բայց Գաւենտայ գծագրածն լայնաձև է և ծայրը քառակուսի :

Երևանու մեծ երկրաշարժին ատեն, յորում գրեթէ գաւառին բոլոր նշանաւոր շէնքերը կործանեցան, Չաքարիա և ուրիշ ժամանակակից յիշատակագիրք կ'ըսեն, թէ Գեղարդի վանքն ևս կործանեցաւ, որոց մին ակահատես՝ այսպէս կը գրէ (1684 ին), « Այրի վանից ձորակին մէջ աւելի եղաւ աւերած և կործանումն, վասն զի բովանդակ շէնքն կանգնած է խոր ձորին մէջ և շրջապատած է անգղին քարերէ ուս, տի երկրաշարժին ատեն այդ սոսկայի քարերը չորս կողմանէ թաւաւ լեցան վանքին վերայ, և գրեթէ ուրիշ բան չէր նկատուէր անդ՝ բայց միայն քարանց կուտեր, որք տեսողաց վերայ սոսկումն և սարսուռ կը բերէին . նոյն իսկ բոլոր ճանապարհները խափանուած էին, ուս, տի թէ որ հարկ լինէր ոգէպահիկ կերակուր տանել նոցա՝ ուսոց և թիկանց վերայ առած փսիթեբոս կ'երթային » : Վանքին առաջ նորոգն՝ երկրաշարժին ատեն Երևանու Անապատ եկեղեցւոյն մէջ լինելով անոր փլատակին տակ մեռաւ : Իւր յաջորդն Գաւիթ (Բ) իւր եղբորորդին, յետ երեք—չորս տարիներու սկսաւ շինութեանց ետէէ ըլլալ, և ըստ վերոյիշեալ Գրչին և աներկիւղ և անկասկած մը տաւ շինութեանց մէջ, իբրև մի քաջ պատերազմող թագաւոր՝ որ ամեննին չի վախնար պատերազմէ և ինքնին կը վարէ պատերազմի խումբերը . այսպէս անվեհերաբար մտաւ փլած և խարխալած տան մէջ նորոգելու համար, կանգնեց բարձրաբերձ պարիսպներ տաշուած քարերով, հաստատուն և ամրապինդ, նոյնպէս նաև բոլորակաձև շէնքեր, քանակապաշտ, քեօշտ, ապարանք, սենեակք, խոհանոցք, և ուրիշ շատ շտեմարաններ, տաշուած քարերով, կրով և

Թազով, զորս տեսողքն կը հիանայինս Շինեց նաև արծաթէ տուփ (դուրխի) աստուածամուկս գեղարդին պահարան, և զարդարեց պատուական և թանկագին ակունքներով և ոսկէջրեց . շատ ծախք գնաց, գրեթէ քսան և հինգ թումանէն աւելի և ոչ պակաս, ուրիշ այլ և այլ շէնքեր ալ շինեց, զորս չեմ գրած՝ վասն զի այս կրկին նորոգումս շատ աւելի եղաւ քան զառաջինն ։

Եթմնևտասներորդ դարուն վերջերն՝ (յամի 1694 յունիս 2) Ճեմելի իտալացի ուղևորն Երևանէն հոս եկաւ, ութ ժամ ձիաւորելով և առանց փոքրիկ ստորագրութիւն մ'ընելու, կը յիշէ զայն Kiekart կոչելով, և ըստ Գաւեռնեայ նորա հոս բերողն զՄատթէոս առաքեալըն կը համարի փոխանակ թագէի . Ութևտասներորդ դարուն Աբրահամ կաթողիկոսն քանի որ ի գահ չէր բարձրացած, եկաւ և սիսուրբ Գեղարդն, ինչպէս կ'ըսէ, մնալով անդ երկու գիշեր ։ յետոյ կը յիշէ (Վ. ԻԶ) « Նատիր շահին Ս. Գեղարդայ և Գօրադարայի կողմերու լեռանց դագաթն ելնելը, և երկու ամէն ետքը լեռնէն իջնելը ։ Սոյն դարուս կէսէն ալ առաջ՝ շէն էր Այրի վանքն, և նոյն միջոցի Սիմէոն կաթողիկոսն Երևանու մէջ ունեցած վիճակները և զիւղերը կը նշանակէ. Նորագաւիթ, Նորք, Ինկիճէ, Տաճարափակ, Բարձափի, Պորտիկ. և կալուածները՝ Պորտիկ գիւղն, Ագարակ և Վերի Աւգախներ, ուսկից տասանորդ կ'առնոյր, նոյնպէս Գողթ գիւղի բերքերուն կէսը, դարձեալ ուրիշ շատ այգեստանք, ջրաղացներ, ձիթահաններ, երկիրներ և այլն, այլ և այլ գիւղօրէից մէջ . որոց մեծ մասն ստացած էր տեղւոյն առաջնորդն Պետրոս Վարդապետ ճահկեցի . բայց քիչ յետոյ այս շքեղ և գեղեցիկ մինաստանս զուրկ 'ի ընակչաց ամայացաւ, ինչպէս որ կ'երևի՝ երբ Պարսից պետութիւնը լեկաց ասպատակէն յուզեալ շփոթեցաւ . Սոյն պատճառս կու տայ նոյն իսկ Մորիէ անգղիացին մենաստանիս ակերման, 40 կամ 50 տարի առաջ քան իւր այցելութիւնը (1813), և տակաւին բաւական շէն է կ'ըսէ իւր հաստատուն և ամուր շինութեան պատճառաւ . և սակաւ ծախքով կարելի է կատարելութեան հասցնել . շինուածքին ոճն անհարթ և անարուեստ թուեցաւ իրեն . կը յիշէ նաև Հայոց անդ ուխտագնացութեան երթալն, և սեղանոյն վերայ կախուած այլ և այլ ընծաներ և նուէրներ, որոց պատճառն չէ կարողացած ստուգել .

Վերոյիշեալ Մորիէ անգղիացւոյն հայրենակիցը ֆէր Բորդըր՝ որ քիչ տարի վերջ (1819) եկաւ աստ քննելու, ըստ իւր պնդիւ ճաշակին կը նկարէ նրբօրէն զԳեղարդն (Kagargast գրելով, նաև Եթմն եկեղեցիներն) . շատ նորանշան և մեծակառոյց շինուածք մի է սականգնած բուն լեռան սրտին մէջ . սրբազան տաճարն կը բարձրանայ աւերակայ և գերեզմանաց մէջ, ամէն կողմանէ անպատասպար և խորին միայնութեան մէջ, որ յիրաւի խորին և վսեմական ազդեցութիւն կը տպաւորէ մարդուս սրտին մէջ ։

Հին նահատակներու բազմաց մարմինքն թաղուած են աստ որոց անուանքը կենաց գրքին մէջ գրուած են, արդի շերմեաւանդն երկրպալ-  
 փութ կը համարին, թէ նոյն ինքն Ս. Գրիգոր (Հայոց մեծ պահապան  
 հրեշտակը) հայտնաբեր ատեն սուրբ լերանս մէջ ապաստանած է  
 և այլն: Մեծ եկեղեցւոյն կամարներուն և սիւններուն ձևն և դրուագ-  
 ները ճշգիւ սաքսոնական ճարտարապետութեան ոճոյն կը նմանին:

Ուրիշ անգղիացի մի ևս, (Մոնղիթէ զօրավար), որ ասոնցմէ  
 առաջ և յետոյ Հայոց և Պարսից սահմանները քննեց, յիշելով փո-  
 բածոյ եկեղեցիներն կրտէ. « թէպէտև Հնդկաստանի նոյն տեսակ ե-  
 կեղեցիներու մեծութեան համեմատ նշանակութիւն չունին ասոնք,  
 սակայն սիւներու եզրագտական ձևովն՝ շատ նշանաւոր են. Յետ այս  
 երեք անգղիացւոց 1834 ին Տիւպուա հելուեփրայցին, քննութեան ե-  
 կաւ այս տեղեացս և ինամբով դժագրեց վանքին և եկեղեցիներուն  
 արտաքին երևոյթն և յատակաձևն, և ժամատան արտաքին տեսիլն  
 և մասամբ ինչ քանդակաց: Նոյն տարին Յովհաննէս Բ կաթողիկոսն  
 յանձնեց այն տեղը Յովհանն Նախիչեաննցոյ վարդապետի, օս՝ ըս-  
 կաւ շինութեան և նորոգութեան ետևէ ըլլալ. բայց դեռ ևս չաւար-  
 տած վրա, հասաւ Արարատու մեծ երկրաշարժը (2 յուլիս 1840)  
 և շատ վնաս գործեց (Բ) մեծ տաճարին և բնակարանաց. քիչ ա-  
 տեն վերջ Սեւանայ անապատէն Մարտիրոս վաղարշապատնցոյ  
 առաջնորդութեամբ եկան մի քանի կրօնաւորք և վերադին սկսան շի-  
 նել՝ այս շինութեան մէջ ինամբով վաստակեցաւ վերջին վանահայ-  
 րըն Միքայէլ Վ. Չամոյեանց և հարաւային դրան վրայ հին արձանա-  
 գրութեան տակ աւելցուց իւր արձանագրութիւնն՝ ըսելով, որ այս եր-  
 բորդ անգամն է տեղւոյս վերանորոգութեան: Արդ այս ամէն ըսած-  
 ներէս կը հետևի, որ Այրիվանքն՝ Հայոց հնագոյն վանորէից մին է  
 (թէ և ոչ առաջին), և թէ իսկզբանէ բնակարան եղած է միաբա-  
 նակեցաց և ճգնաւորաց, թէպէտև Ս. Սահակէն սկսեալ մինչև ին-  
 ներորդ դարու կէսը յիշատակութիւն մի չենք գտներ. նոյնպէս նաև  
 յետոյ մի քանի գտուուց մէջ, վանահարք տեղոյս ոմանք եպիսկո-  
 պոսք են և ոմանք վարդապետք:

